

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախասցեալ օր եւ երէկ Ուաշինկթընի մէջ տեղի ունեցան բանակցային հերթական նիստեր լիբանանեան եւ իսրայէլեան պատուիրակութիւններուն միջեւ՝ ամերիկեան միջնորդութեամբ: Բողոքելով իսրայէլեան շարունակուող յարձակումներէն, լիբանանեան պատուիրակութիւնը մերժեց նկարահանուիլ իսրայէլեան կողմին հետ: Պէյրութի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Միշէլ Իսա շեշտեց, որ անյապաղ ջանքեր ձեռնարկուած է՝ լուծելու համար տարակարծութիւնը եւ շարունակելու բանակցութիւնները: Ըստ «Ռոյթըրզ» գործակալութեան, լիբանանեան ու իսրայէլեան կողմերը կը քննարկեն հարաւի որոշ շրջաններու մէջ ապահովական փորձառական քայլերու գործադրութիւնը եւ իսրայէլեան ուժերու սահմանափակ նահանջը, որպէսզի այնտեղ տեղակայուի լիբանանեան բանակը:



Գետնի վրայ, լիբանանեան բանակը յայտարարեց, թէ ականներ եւ չպայթած ռումբեր յայտնաբերած ու վնասագերծած է հարաւային շարք մը շրջաններու մէջ եւ աշխատած է վերաբանակ ալն ճամբաները, որոնք վերջերս հողակոյտերով փակուած էին իսրայէլեան ուժերուն կողմէ:

### ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՈՒՇԵՂԱԳՈՅՆ ՉԷՆԸ

Հանրապետութեան նախագահ ժողգէ Գնու լիբանանցիներուն կողմէ յանձնարու, թէ ունին մէկ հայրենիք եւ այնտեղ գիրենք կը պաշտպանէ պետութիւնը, մինչ միասնականութիւնը կը համարուի ուժեղագոյն զենքը: Պատասխանի մէջ պատուիրակութիւններ ընդունած ատեն Գնու յայտնեց, որ Ուաշինկթընի մէջ ընթացող բանակցութիւնները կը միտին յարմար միջավայր ստեղծելու՝ գործադրելու:



համար լիբանանեան պահանջները իրագործող յստակ ծրագրեր: Ըստ նախագահին, լիբանանեան-իսրայէլեան բանակցութիւնները անջատ են Չուիցերիոյ մէջ ամերիկեան-իրանեան բանակցութիւններու որոշումներէն:

Վարչապետ Նաուաֆ Սալամ իր կարգին ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի մարդասիրական հարցերու համակարգող Օմրան Ռիզան եւ ԵՈՒՆԻՖԻԼ-ի իրամասնատարը, որոնք հետ քննարկեց հարաւի մէջ տիրող կացութիւնը եւ քաղաքացիներուն ապրուստային պայմանները բարելաւելու հնարաւորութիւնները: Անդրադառնալով խաղաղապահ ուժերու առաքելութեան մօտալուտ անարտին, Սալամ շեշտեց հա-



րաւի մէջ միջազգային ուժի մը ներկայութեան հրամայականը՝ վերահսկելու համար զինադադարը եւ համարելու հակամարտողներուն միջեւ հաղորդակցութիւնները: Միւս կողմէ, Իսրայէլի վարչապետ Պէնիամին Նեթանիահու յայտնեց, թէ «տակաւին ընելիք ունինք Լիբանանի մէջ եւ մեր վերահսկողութեան տակ պիտի պահենք հարաւային ապահովական գօտին»: Իսկ պաշտպանութեան նախարար Իսրայէլ Զաք շեշտեց, որ իրենք պատրաստ են չունին նահանջելու լիբանանեան որոշ շրջաններէ, նոյնիսկ եթէ ամերիկացիները այդ պահանջեն:

### ՍՈՒՐԻԱՅԻՆԵՐՈՒ ԱՐՏԱՅԱՆՁՆՈՒ

Լիբանանի ապահովական մարմինները երէկ սուրիական կողմին յանձնեցին 128 սուրիացի դատաւարտեալներ՝ առ ի գործադրութիւն բանտարկեալներ արտայանձնելու մասին Փետրուարին կնքուած համաձայնութեան: Նշենք, որ երբեք ամիս առաջ Սուրիա փոխադրուած էր 132 բանտարկեալ եւս: Նշենք, որ մեծագոյն՝ Ռուսիէ բանտին մէջ արգելափակուած էր շուրջ 356 սուրիացի, որոնցմէ 260-ը այժմ փոխադրուած են Սուրիա:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԴԺՈՒԱՐ ՈՐՈՇՈՒՄԻ ԱՌՁԵԻ

Կը սպասուի, որ Հայաստանի Սահմանադրական դատարանը վաղ գումարէ նիստ մը՝ քննարկելու համար 7 Յունիսին կայացած խորհրդարանական ընտրութիւններուն արդիւններուն վերաբերող բողոքները, որոնք ներկայացուած են ինչպէս ընդդիմադիր ուժերուն, այնպէս ալ յարթած կուսակցութեան կողմէ: Ընդդիմադիր խմբաւորութիւնները ներկայացուցած բողոքները միացուած են մէկ թղթա-



ծրարի մէջ եւ այնտեղ կը պահանջուի անվաւեր ճանչնալ 14 Յունիսին Ընտրական կեդրոնական յանձնաժողովին իրապարկած վերջնական արդիւնները եւ կազմակերպել ընտրական երկրորդ փուլ: Դատարանը պետք է իր վերջնական վճիռը հրատարակէ մինչեւ 4 Յունիս: Մինչ Սահմանադրական դատարանէն վերջնական որոշումի հրատարակումը, վարչապետ Նիկոլ Փաշինեան կը շարունակէ ընդունիլ ընտրական շնորհաւորանքներ: Ան հեռախօսազրոյց ունեցաւ իր հնդիկ պաշտօնակից Նարենտրա Մոտիի հետ ու վերջինս շնորհաւորեց Հայաստանի վարչապետը՝ խորհրդարանական ընտրութիւններուն իր գլխաւորած կուսակցութեան յաղթանակին առիթով: Փաշինեան եւ Մոտի փոխանակեցին հետեւողական համագործակցութեան եւ յաւելեալ յաջողութեան մտախոսքներ:

### ԸՆՏՐԱԿԱՇՆՈՒՄԻ ԴԵՍ ՊԱՅՔՈՒ

Քննչական կոմիտէն յայտարարեց, թէ «Հայաքու» միաւորումի համակարգող Ալեքսի Զալապեան ձերբակալուած է, որովհետեւ փորձած է ապօրինի միջոցներով ազդել քուէարկողներու ընտրութեան վրայ եւ այդ նպատակով Մայիսին տեսակցած է այլ պետութեան պաշտօնատարներու հետ՝ համոզելու, որ աջակցին քաղաքացիներուն ընտրական իրաւունքին ազատ իրականացումը խափանելու ջանքերուն: Չալապեան երկ, աւելի ուշ, երկու ամիսով կալանաւորուեցաւ: Իսկ Փոստմարտին ղեմ պայքարի կոմի-



տէն ու Ազգային անվտանգութեան ծառայութեան կողմէ իրականացուած գործողութիւններուն հիման վրայ կարելի եղաւ պարզել, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցութեան թեկնածուներէն մէկը տարբեր չափի ընտրակաշառք բաժնած է քաղաքացիներու՝ նշեալ կուսակցութեան ի նպաստ քուէարկելու նպատակով:

### ԳԵՐԻՆԵՐՈՒՆ ՀԱՐՑՈՎ ԿՈ՞՛Ւ ՈՒԱՇԻՆԿՈՒՆԻՆ

Ամերիկեան գոնկրեպի մէջ Գալիֆորիա նահանգէն ներկայացուցիչ Ճիմ Զոսթա ահազանգեց, թէ հայ ռազմագերիները եւ առեւանգուած քաղաքացիները հազար օր է կը մնան ատրպէյճանական գերութեան մէջ եւ անոնց ընտանիքները կը շարունակեն սպասել պատասխաններու եւ իրենց հարազատներուն ապահով տունդարձին: «Աշխարհը երբեք պետք չէ մոռնալ ատրպէյճանի շարունակուող յանցագործութիւնները», մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց Զոսթա, Պաքուի գործողութիւնները համարելով միջազգա-

յին եւ մարդկային հիմնարար իրաւունքներու բացայայտ խախտում: Նոյն ասուլիսին ընթացքին, ամերիկացի գոնկրեպի Գրետ Շըրմըն շեշտեց, որ առանց բոլոր հայ գերիներուն անյապաղ ազատ արձակումին եւ տունդարձին, Հարաւային Կովկասի մէջ կարելի չէ հաստատել կայուն խաղաղութիւն:

### ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ

«Արեւմտեան ատրպէյճանցիները» կը պահանջեն, որ իրենց հայրենի հող վերադառնալու հարցը դառնայ հայ-ատրպէյճանական խաղաղութեան հոլովոյթին կարեւոր մասնիկը, պնդելով որ առանց այդ իրաւունքի վերականգնումին կարելի չէ խօսիլ տարածաշրջանային երկարատեւ, կայուն խաղաղութիւն եւ համագործակցութեան մասին: «Արեւմտեան Ատրպէյճանի համայնք»-ի նախագահ Ազիզ Ալեքպերի յայտնեց, որ իրենք «հիմնուելով միջազգային իրաւունքին վրայ, կը պահանջեն, որ միջազգային կազմակերպութիւնները ճանչնան եւ ապահովեն այդ մարդոց իրաւունքները: Մենք կը կարծենք, որ խաղաղ բանակցութիւններուն ընթացքին կարելի է խորհիլ այդ նիւթին մասին», ըսաւ Ալեքպերի: Միաժամանակ, «Արեւմտեան Ատրպէյճանի համայնք»-ին նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ փախստականներու համաշխարհային օրուան նուիրուած ձեռնարկ մը, որուն ընթացքին շեշտուեցաւ «Արեւմտեան Ատրպէյճան վերադարձ»-ի անհրաժեշտութիւնը, իսկ մասնակիցները այդ համարեցին որպէս պատմական արդարութիւն եւ մարդկային իրաւունքներու վերականգնում: Նշենք, որ ատրպէյճանցիները որպէս Արեւմտեան Ատրպէյճան կը համարեն Հայաստանը:

### ԵՐԵՒԱՆԻՆ ԵՐԿՆՏՐԱՆԸ

Ռուսիոյ նախագահի բանբեր Տմիթրի Փետրով յայտնեց, որ Երեւան այժմ կը գտնուի զարգացումի իր սեփական ուղիի ընտրութեան հոլովոյթին մէջ եւ այդ կարեւոր է Մոսկուայի համար, որովհետեւ Ռուսիան ու Հայաստանը եղբայրական երկիրներ են: Փետրով միաժամանակ մտադրեց, որ Երեւան կը հասկնայ Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ) իր անդամակցութեան առաւելութիւնները: Յիշեցնենք, որ ԵԱՏՄ-ը Ռուսիոյ գլխաւորած տնտեսական միութիւնն է, որուն այժմ կ'անդամակցի նաեւ Հայաստանը, սակայն կրնայ ստիպուիլ անկէ դուրս գալ՝ զարգացնելու համար յարաբերութիւնները Եւրոմիութեան հետ: Մոսկուա բազմիցս յստակացուցած է, որ Երեւան պետք է ընտրութիւն կատարէ երկուքին միջեւ, որովհետեւ կարելի չէ միաժամանակ անդամակցիլ ԵԱՏՄ-ին եւ սերտ յարաբերութիւններ ունենալ Եւրոմիութեան հետ:

Հայաստանի հետ տարակարծութիւններու նիւթին անդրադարձաւ նաեւ Ռուսիոյ գլխաւորած Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութիւնը (ՀԱԿԿ): Կազմակերպութեան մնայուն խորհուրդի գործող նախագահ Վիքտոր Վասիլեւ շեշտեց, որ «Հայաստանի շուրջ արեւմտեան երկիրներու ոչ-բարեկամական ռազմաքաղաքական քայլերը կրնան առաջնորդել տարածաշրջանային իրավիճակի սրումին»:

### ԾԱՅՐԱՅԵՐ ԳԱՐՈՒՆ

2026-ի գարունը Հայաստանի մէջ յատկանշուեցաւ կլիմայական ծայրայեղ պայմաններով: Շրջակայ միջավայրի



նախարարութեան օդերեւութաբանութեան կեդրոնի տնօրէն Լեւոն Ազիզեան յայտնեց, որ անցնող ամիսները հանդիսացան վերջին տասնամեակներու ամենէն խոնամեղին մէկը, որ եապէս փոխեց ջրային պաշարներուն պատկերը: «2026-ի գարունը կը համարուի 1935-էն ի վեր 12-րդ ամենէն խոնամը: Տեղումներուն քանակը հասաւ 260 միլիմետրի՝ տարեկան միջինին 131 առ հարիւրին: Մարտ ամիսը դարձած է Հայաստանի պատմութեան ընթացքին արձանագրուած ամենէն անձրեւոտը», ըսաւ Ազիզեան:

## ՍԱԿԱԳԻՆԵՐՈՒ ՆԱՀԱՆՋ

Իրանի ճակատին վրայ հանդարտութեան վերահաստատումի լոյսին տակ, «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ քարիւղի մէկ տակառնի սակագինը նահանջած է 75 տոլարէն վար՝ 27 Փետրուարէն ի վեր առաջին անգամ ըլլալով: «Ռոյթըրզ» հաղորդեց նաեւ, որ ոսկիի օստին գինը նահանջած է նուազ քան չորս հազար տոլարի՝ 2025-ի Նոյեմբերէն ի վեր առաջին անգամ ըլլալով: Կը մնայ տեսնել, թէ վառելանիւթի սակագիններուն նուազումը պիտի ազդէ՞ վերջին շրջանի գալիօրէն բարձրացած ապրուստային ծախսերուն վրայ:



# ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

## ԶՄԻՆՈՒՄ ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ

1922 Սեպտեմբերի 24-ին (հոգևոր) աղետը յունաց եւ հայոց համար կը մայր չսպիացող վերջ մը:

Երեւանի Պետական համալսարանի հրատարակչութիւնը լոյս ընծայեց խիստ շահեկան պատմագիտական ուսումնասիրութիւն մը այս նիւթին շուրջ: Գիրքին խորագիրն է՝ «Յեղասպանութեան քաղաքականութեան շարունակութիւնը 24 Սեպտեմբերի (1922)»: Աշխատասիրութեան հեղինակն է Երիտասարդ պատմաբան, Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի արագ գիտաշխատող, դասախօս, բազմաթիւ գիտական ուսումնասիրութեանց հեղինակ Թեմիլնէ Մարտոյեան: 303 էջանի հատորին խմբագիրն է հանրայայտ պատմաբան փրոֆ. Աշոտ Յայրուհի:



Հեղինակին երախտագիտական խօսքն էտք, իր խօսքը փոխանցած է հատորին խմբագիրը. որմէ ետք Ներածական բաժինով, Թ. Մարտոյեան համապարփակ ակնարկով մը ներկայացուցած է նիւթին առնչուող առկայ պատմագիտական թէ յուշագրական գրականութիւնը հայերէնով, անգլերէնով եւ յունարէնով, եւ ապա հարցադրած՝ թէ 1922-ին 24 Սեպտեմբերի մէջ պատահածները «հայոց ցեղասպանութեան քաղաքականութեան շարունակութիւնն է» եւ ան համոզիչ տուեալներով կը փաստէ, որ կատարուածը յոյներու եւ հայերու դէմ կազմակերպուած եւ կանխամտածուած ոճիր էր՝ ազգային եւ կրօնական հիմունքներով, ինչ որ միջազգային իրաւաբանութեան տեսակետէն՝ ցեղասպանական արարք էր:

Մենագրութիւնը կը բաղկանայ երեք մասերէ. Վերջաբանի Փոխարէնէն ետք ունի չորս յաւելումներ. անգլերէնով եւ յունարէնով տրուած են ամփոփումները գիրքին. բնականաբար կան անձնանուններու եւ տեղանուններու ցանկեր. ուշագրաւ են յատկապէս հազուագիտ պատճենահանուած լուսանկարները, փաստաթուղթերը կամ վաւերաթուղթերը:

Առաջին մասին խորագիրն է՝ «24 Սեպտեմբերի քաղաքակրթութեան օրրան» (էջ 24-40), որ հակիրճ ակնարկ մըն է այդ քաղաքին պատմութեան, որ կոչուած է «Արեւելքի աստղ», «Արեւելքի փոքր Փարիզ», «Յունիական ծովու թագուհի»: Անոր ազգաբնակչութիւնը կը բաղկանար յոյներէ, հայերէ, թուրքերէ եւ հրեաներէ, որոնք կ'ապրէին առանձին թաղամասերու մէջ: Հայոց մասին առաջին յիշատակումները կը վերաբերին 1179 թուականին: Հայոց թաղամասը կը կոչուէր Հայկոն: Հայերու թիւը հետզհետէ աւելցած է արեւելեան Հայաստանէն գաղթած հայերու շնորհիւ: Հայեր բնակած են Նաեւ քաղաքին յարակից անաւներուն եւ գիւղերուն մէջ: Հայոց ամենանշանաւոր եկեղեցին Սբ. Ստեփանոսն էր: Կային Նաեւ Սբ. Գրիգոր Լուսաւորիչը, Սբ. Յարութիւնը, Սբ. Խաչը, Սբ. Կարապետը, Սբ. Աստուածածինը, Սբ. Հոգեգալուստը: 24 Սեպտեմբերի յիշատակը պատճառ հանդիսացած էր, որ քաղաքը դառնայ ամբողջական կեդրոն: Հայեր փայլած են իրենց առեւտրական գործերով, վաճառատուններով, միջնորդական կապերով՝ Եւրոպա-Ասիա ուղղութեամբ: Հայեր ապրած են բարեկեցիկ կեանք մը: Վաճառաշահ գործունեութեան կողքին, հայութիւնը յառաջդիմած է մշակութային-կրթական առումներով, դպրոցներով, մամուլով, տպարաններով, մտաւորականներով, թարգմանչական աշխատանքներով: Կարելի է ըսել, որ 19-րդ դարու կեսերուն հայութեան զլխաւոր կեդրոններէն էր 24 Սեպտեմբերի հայ պարբերական մամուլը խորապէս ուսումնասիրած է հայրենի ակադեմիկոս, պատմաբան Ալպեր Խառատեան: Կը կարողանք հայոց թուաքանակին, հասարակական կեանքին, այլ յարաբերութեանց (կաթողիկէ, աւետարանական) գործունեութեանց մասին:

Երկրորդ մասը՝ «Յեղասպանութեան քաղաքականութեան իրագործումը 24 Սեպտեմբերի» (էջ 41-136) լայնօրէն կը պատմէ 24 Սեպտեմբերի միջինը: 1922 թ., երբ քաղաքը կը գտնուէր յոյներու հակակռիւն տակ եւ յունական ուժերը յաղթանակած էին Կոնստանդնուպոլիսը: Թէեւ անկէ առաջ, եղած էին մասնակի տեղահանութիւններ, բայց կեանքը վերագտած էր իր հունը: Հայաստանի առաջին հանրապետութիւնը ուներ իր հիւպատոսութիւնը (հիւպատոսը՝ Վահան Պարտիզպանեան). սակայն, առ երեւոյթ այս խաղաղ կեանքը պիտի շրջուէր զլիւզիկ, երբ յունական զօրքը ջախջախիչ պարտութենէ ետք՝ պիտի նահանջէր Եգեանական ծովու ափ եւ անկէ ալ յունական կողմէն՝ 24 Սեպտեմբերի անկախութեան լքելով քեմալականներու վերջնականութեան, միուցքին եւ կատարութեան դէմ-յանդիման: Գիրքին հեղինակը հանգամանօրէն կը վերլուծէ քեմալականներու գաղափարախօսութիւնն ու քաղաքականութիւնը, անոնց վերաբերմունքը քրիստոնէից նկատմամբ՝ «Քեմալական գաղափարախօսութիւնը պետութեան մէջ հայերի եւ յոյների խաղաղ գոյակցութիւնը սպասուելիք էր համարում թուրքերի անվտանգութեան» համար: Կը կարողանք՝ «Քեմալականներն արեւմուտքում ռազմական գործողութիւններ են ծաւալում յոյների, Կլիկիայում՝ տեղի հայ բնակչութեան եւ արեւելքում՝

### ԱՄԵՏԻՍ ՈՒԶՄԻԿ (Նիկոսիա)

Հայաստանի Հանրապետութեան դէմ: Նրանց կարելու ձեռքբերումն էր Մոսկուայի 1921 թ. պայմանագիրը»: 1921 եւ 1922 թուականներուն քեմալականներ հետզհետէ կը մտնէին 24 Սեպտեմբերի յայտնաբեր գրաւելով քաղաքներ. յոյն զաղթական բազմութիւններ կը սկսին ժամանել քաղաք՝ վկայելով զարհուրելի իրադարձութեանց մասին: Տարօրինակ է, որ քաղաքի բնակչութեան մեծ տոկոսը անտարբերութիւն կը ցուցաբերէ վերահաս վտանգին նկատմամբ: Քիչէրն են մտահոգ եւ ահաբեկուած, որոնք կը քննադատուէին որպէս անտեղի ահ ու սարսափ տարածող անխոհեմներ: Ըստ անտարբերներու՝ քեմալականներ կիրթ գիւղուորներ են. Նաեւ՝ օտար (քրիտանական, ֆրանսական, իտալական եւ ամերիկեան) ռազմականներու ներկայութիւնը 24 Սեպտեմբերի ափին՝ վստահելի երաշխիք մըն է իրենց անվտանգութեան: Մեծ պետութիւններու ներկայութիւնը, իբրեւ թէ պիտի զսպէ քեմալական խաժամուժը: Սակայն, 9 Սեպտեմբերին, երբ առաջին թուրք զինուորները կ'երեւին քաղաքին մէջ, սկիզբ կ'առնէ լայնածաւալ եւ արհեստագործ կոտորած մը ոչ միայն թուրք զինուորներու գործօն մասնակցութեամբ, այլեւ՝ տարբեր վայրերէ ժամանած արհեստաբուն թալանչիներու, ջարդարարներու եւ ոճրագործներու անսանձելի մղելութեամբ: Փաստ է, որ հրեաներ, օգտուելով առիթէն, բացայայտօրէն կ'օժանդակէն թուրքերու՝ ուղղորդելով զանոնք եւ մասնակցելով ընդհանուր թալանչի: 24 Սեպտեմբերի պարագային կայ բնորոշ կետ մը՝ այն ալ քաղաքին յունաց եւ հայոց թաղամասերուն հորեհումն էր, որ լափիկեց ամեն ինչ՝ բնակիչներ, տուններ, եկեղեցիներ, խանութներ: Թուրք հրծիգներ, կազմակերպուած սադրանքով, հիմնայապէս հրկիզեցին քրիստոնեաներու ինչքերը: Անգուր կոտորածին եւ հրդեհին հետեւանքով, ըստ բախտի խոյս տուած բնաւեր զանգուածը կը խռնուի Նաւահանգիստ՝ փրկութիւն ակնկալելով քրիստոնեայ պետութեանց յաճանաւերէն, որոնք անտարբերութիւն ցոյց կու տան ի տես աղէկալուր եւ յուսաբէկ խլեակներու. աւելին, եռաջած ջուր կը թափէին, որ փախստականներ Նաւեր չկարողանան բարձրանալ: Անոնց այս քարստութեան պատրուակն էր՝ իրենք չէզոք երկիրներ են թուրք-յունական պատերազմին մէջ: Մինչ այդ, տեղի ունեցած էր հայ-յունական զինակցութիւն մը Յունաստանի մէջ եւ կազմուած Հայկական Լեգեոնը անուանի զինուորական զօրավար Թորգոմի (Արսէն-Արշակ Նազգաշեան) հրամանատարութեամբ: Հայ եւ յոյն կամաւոր զինեալներ կը փորձէն ինքնապաշտպանութիւն կազմակերպել, բայց ուժերը անհաւասար էին: Թ. Մարտոյեան համակողմանիօրէն ուսումնասիրելով աղէտին տարողութիւնն ու սրտանմիկ պատկերները, բազմաթիւ ակնատեսներու վկայութիւններ մէջբերելով, կը նկարագրէ քաղաքին իրավիճակը: Կը յիշէ 24 Սեպտեմբերի զիւրազանքը, զինուորական, լրագրական, միսինարական առաջնութիւններ ունեցողները, որոնք հարազատ պատկերներով նկարագրած են սահմնելեցուցիչ դէպքերը, անոնցմէ կրնանք յիշատակել ամերիկացի մեծանուն գրող Էռնեստ Հեմինգուեյը, որ որպէս «Toronto Daily Star» թերթի թղթակից կը գտնուէր 24 Սեպտեմբերի: Անկին, տեղեկագրեր չեն պակսիր ապացուցելու համար քաղաքին դիտարեւել հրկիզումին պատասխանատուները, ջարդերու կազմակերպիչները: Միւս կողմէ, բարձրացած աղմուկին դիմաց՝ Քեմալ Աթաթուրք կը փորձէ մեղմել աղէտին ահաւորութիւնը եւ չքմեղանալ յաշն հանրութեան: Ամենավայրագ կերպով կը խողիտողի քաղաքին յունաց առաջնորդը՝ Տ. Խրիստոսթոմոս արքեպիսկոպոսը, իսկ հայոց առաջնորդ՝ Դեռնոյ Եպս. Դուրեան կը յաջողի խոյս տալ հաւանական սպանութենէ վրէժն ուշ՝ 24 Սեպտեմբեր 1933-ին, ան պիտի դաշունահարուէր Նիւ Եորքի Սբ. Խաչ եկեղեցու մէջ՝ դաշնակցականներու կողմէ: Հատորին հեղինակը կը ներկայացնէ երկու տեսակետեր քաղաքին հրկիզման յանցագործներու առնչութեամբ. ի հարկէ, ճշշիչ մեծամասնութիւնը կ'ամբաստանէ թրքական կողմը, մինչ թուրքեր կ'ամբաստանեն զոհերը՝ հայերն ու յոյները, ինչ որ զաւելտալի անհեթեթութիւն մըն է:

Երրորդ մասը՝ «Յեղասպանութեան հետեւանքները եւ միջազգային իրաւական գնահատականը» (էջ 137-174) կը նկարագրէ փախստականներու գաղթը յունական կողմէն եւ Յունաստան, անոնց ծանր պայմանները, վերականգնումի ճիգերը, հայոց որբերու եւ տնազուրկ բեկորներու թշուառ վիճակը: Սակայն, հետաքրքրական պահ մը կայ՝ երբ պատահական յայտնուած ճափոնական Նաւ մը՝ Տոկէի Մարու, անվերապահօրէն կը փրկէ օգնութեան կարօտ հայոց եւ յոյներու եւ անոր Նաւապետը՝ ի տես քրիստոնեաներու անտարբերութեան եւ յանցագործութեան կը գոչէ՝ «Փառք, հազար փառք իմ Աստծոյն, որ զիս քրիստոնէայ չէ ծնած ձեզի պէս»: Ուշագրաւ է Վերջաբանը, որ զուգահեռներ կը կատարէ 24 Սեպտեմբերի կոտորածին եւ Արցախի 2022-ի շրջափակման եւ 2023-ի հայաթափումին, իրաւացիօրէն ընդգծելով, որ նոյն ցեղասպանական ոճն ու քաղաքականութիւնն է որդեգրուած թուրք-ատրպէյճանական հոգեկից պետութեանց կողմէ, որուն արմատները պէտք է փնտռել ընդհանրապէս օսմանցիներու իւրացուցած ցեղասպանական ոգիին եւ Եուրօպայի մէջ:

Պէտք է նշել, որ այս իրադարձութեանց ամենաանաչառ վկան է 24 Սեպտեմբերի մէջ ԱՄՆ-ի հիւպատոս Զործ Հորթոն, որուն զեկցուները հերիք են փաստելու քեմալականներու կատարած ցեղասպանութիւնն ու բնաջնջման մուլուցքը:

Ազուրակալ թեմիմէ Մարտոյեան իր երախտարժան ներդրումը ունեցած է այս յոյժ կարեւոր նիւթին արծարծման եւ լուսաբանման մէջ, հաստատած է՝ հայ-յունական բախտակցութեան ու բարեկամութեան իրողութիւնը եւ վկայած՝ որ ցեղասպանութիւնները չեն մոռցուիր եւ պիտի չմոռցուին սերունդէ սերունդ:

# ԱՆՆԵՏԱՑՄԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

### ՊՈՍ. ԳՐԱՅԻ ԳԵՂԵՆԵԱՆ

Մալեգիա կը գտնուի հարաւային Ասիոյ մէջ: Երկիրը կը յատկանշուի իր ցեղային ու մշակութային այլազանութեամբ, որ կ'ընդգրկէ մալայներ, հնդիկներ, չիներ ու տեղական զանազան ցեղախումբեր: Այս այլազանութեան մէջ կը ներառուին տարբեր լեզուներ, ճարտարապետութիւն, մշակութային եւ կենցաղային արժէքներ ու տակաւին: Երկիրը կ'արձանագրէ տնտեսական աճ եւ դարձած է զբօսաշրջիկներու համար լաւագոյն վայր մը: Մալեգիա որդեգրած է իսլամ կրօնը, սակայն հոն կան Նաեւ եկեղեցիներ, հինտու եւ պուտայական դաւանանքի հաւաքականութիւններ:

### Քուալալամփուր, Մալեգիա, Յունիս 2026

Քուալալամփուրի կենտրոնակ 2026-ի մին է «չինական փողոցը», ուր կը վիտան ճաշարաններ եւ գիշերային կեանքը կը ստեղծէ աշխոյժ մթնոլորտ: Երբ սկսայ շրջագայիլ այս աշխոյժ արուարձանի փողոցներուն մէջ, կանգ առի 19-րդ դարէն մնացած հին ու պատմական շէնքի մը առջեւ՝ զաղութատիրական օրերէ եւ մինչեւ չինական ճարտարապետական գեղեցիկ կողող մը, որուն վրայ տեսայ յուշաքանդակ-ցուցատախտակ մը՝ «Անհետացման թանգարան» արձանագրութեամբ: Անհետացման թանգարանը ֆիզիքական կառոյց մը չէ՝ յար եւ նման աշխարհի մէջ ստեղծուած թանգարաններու, այլ փորձ մըն է հանրութեան ուշադրութիւնը գրաւելու, որ անհրաժեշտ է պահել եւ հոգ ունակի մեր ազգային մշակութային կողողներուն եւ արժէքներուն, որպէսզի անոնք գոյատեւեն եւ չանհետանան:



Մալեգիոյ մէջ հայ չգտայ, ինչպէս որ սովոր են ընել իւրաքանչիւր երկիր որ կ'այցելւեն իմ աշխատանքային բնագաւառիս երկրումով: Սակայն Քուալալամփուրի այս ցուցատախտակին առջեւ կենալով՝ գտայ հայը: Եթէ Մալեգիան պէտք է տքնի իր արժէքները պահելու՝ իր տարբեր ցեղախումբերու մէջէն, ինչո՞ւ հայը պիտի չընէ նոյնը՝ սփիւռք(ները) պահելու ի խնդիր:

Իմ աշխատանքային կենսաք եղաւ լեցուն ճամբորդութիւններով, որոնց միջոցով տեսայ աշխարհ: Ծանօթացայ աշխարհին եւ սորվեցայ, թէ քաղաքակրթութիւնները որքան այլազան, նոյնքան ալ գունաւոր եւ գեղեցիկ են: Աշխարհի այդ այլազան, գունաւոր եւ գեղեցիկ հաւաքականութիւններու մէջէն տեսայ հայկականը: Տեսայ հայը՝ ոչ անպայման ինծի նմանող, բայց միշտ ալ անոնց հետ գտայ միացնող օղակը՝ մեր պատմութիւնը, մշակոյթը, լեզուն եւ Յեղասպանութեան ստեղծած ցաւը:

Այս տարբերութիւններուն մէջէն տեսայ Նաեւ Ռեժ: Ուժը՝ մասնագիտական ու կեանքի փորձառութիւններու ճամբով: Իւրաքանչիւր մեր տարբերութիւններուն ընդմէջէն ամբարձած ենք մտաւոր, Նաեւ տեղական այդ երկիրներու կեանքի ու արբեակերպի փորձը: Այս փորձը դրամագուլիս է եւ ապրող ուժ:

Իւրաքանչիւր ճամբորդութեան, երբ կը հանդիպիմ նոր հայկական սփիւռքեան իրականութիւններու, աւելիով կը համոզուիմ, որ այս սփիւռք(ները) պիտի մնայ: Եթէ պիտի մնայ (ու պիտի մնայ), կայ հարցումը՝ «Ի՞նչ պիտի ընենք»:

Սփիւռքի մնայուն կարգավիճակ ունենալու գրաւականը մտածել պիտի տայ մեզի, թէ այս «մնայուն» կացութիւնը ինչպէ՞ս պէտք է կազմակերպել եւ աշխուժացնել, որ սփիւռք իրականութիւնը չվերածուի «Անհետացման թանգարան»-ի:

Պատմականօրէն սփիւռք բառը հայուն համար ունեցած է ցաւի, կորուստի եւ միաժամանակ տոկոսութեան երանգ: Սփիւռք(ները) ծնունդ առաւ Յեղասպանութեան արհաւիրքէն եւ մեծ համեմատութեամբ, երբ աշխարհով մէկ ցրուած հայու բեկորներ ստիպուած էին ոչինչէն կենսելու կերտել: Այդ փուլին զխաւոր նպատակը վերապրումն էր:

Այսօր՝ 21-րդ դարու երրորդ տասնամեակին, հայը կը գտնուի բոլորովին տարբեր իրականութեան մը առջեւ: Սփիւռքը այլեւս միազայն, միաձոյլ հասկացողութիւն մը չէ: Անիկա վերածուած է բազմաշերտ ու բազմակերպ սփիւռքներու: Այս իմաստով վերապրելու ժամանակաշրջանը անցած է, եւ օրուան հրամայականը անոր՝ սփիւռք(ներու) կայուն զարգացումն է:

Յեղասպանութենէն ետք սփիւռք(ները) կոչուեցաւ դասական՝ նկատի ունենալով, որ հետեւանք էր Յեղասպանութեան եւ հայրութեան՝ պապեանական հողէն արմատախիլ ըլլալուն ու աշխարհի տարբեր կողմերը հաստատուելուն, ի

Շարունակութիւնը տեսնել էջ 3

ԳՐԱՍԷՐ ԸՎՅՈՒՆԴԻ, ՍԱՏԱՐԷ՝ «ԱՐԱՐԱՏ»-Ի 89-ԱՄԵԱՅ ԳՈՅԵՐԹԻՆ

# Ո՞րն է Ցանկալին, Ի Դիմաց Յախտենական Բռնազրոյակին

## ՈՒՎՇԻՆԿԹԸՆԵԱՆ ԸՎԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ, ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԽԱՂԲՈՒԹԻՒՆԸ, ԹԵ՛ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Օրին, երբ Լիբանան-Իսրայել բանակցութեան օրակարգը հրապարակ նետուեցաւ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու (չ)օրինութեամբ, ոչ մէկ վարկեան իսկ վարանեցայ մտածելու, հոսակ՝ յայտարարելու, թէ որեւէ հաւատք չունիմ, որ այդ փոփոխութիւնն ու պղպշակային միմտութիւն-դերասանութիւնը կրնայ ծառայել խաղաղութեան:

Մարդ որքան կարճատես ու կոյր պետք է ըլլայ, որ նման «հանդիպում» մը կրնայ խաղաղութիւն պարգեւել կողմերուն, երբ շուրջ երկու տարուան իսրայելեան սպանդները, շարժերը, բանդուսները ինչպիսի ահաւորութեամբ ու դաժանութեամբ գործադրուեցան, մինչ նախայարձակ կողմը ո՛չ սաստուեցաւ, ո՛չ զսպուեցաւ, ո՛չ զզացուեցաւ, ո՛չ ալ պատժուեցաւ:

Եթէ ոմանք (կամ շատեր) «իրաջք»ներ կը սպասէին ուաշինկթընեան «անգագաթ եւ անպտուղ» բանակցութիւններէն, պարզապէս տհասներ էին, անգետներ կամ անիրատեսներ, այնքան ատեն, որ չեն նշմարած կամ չեն հաւատարմացած իրենց դիմաց գտնուող անմարդկային ճիւղներու ու գիշատիչներու, մերթ քաղարկուած, մերթ ալ բաց ի բաց բարբարոսութեանը:

Ահաւասիկ, աւելի քան ամիս մը եղաւ, զանազան քաջքընքներով ու լարախաղացութիւններով, մարդկութեան եւ աշխարհին վրայ խնդարը, թէ՛ ուր որ է, խաղաղութիւնը աղանձակաբար թռչեցով պիտի յանգի եւ հանգի իրենց ուսերուն:

Ի՞նչ հեզանք, ի՞նչ պղծութիւն եւ ի՞նչ դիմակաւորութիւն, որոնք հրամցուեցան թէ՛ մասնակից ժողովակալներուն, թէ՛ խնդրոյ առարկայ երկիրներուն մէ՛ծ գոհունակութեամբ ու ցուցամոլութեամբ, Ամերիկայի նախագահ Տոնալտ Թրամփին զլիաւորութեամբ:



Լիբանանը իր համեստութեամբ, անմարտունակութեամբ եւ անծայրայեղութեամբ, Իսրայելը իր ամբարտաւանութեամբ, անկուշտութեամբ եւ անպատասխանութեամբ, իսկ Ամերիկան, հակառակ կայսրութիւն մը ըլլալու հեղինակութեան, իր լարծուն եւ երկդիմի քաղաքականութեամբ, կրցա՛ւ որեւէ համոզիչ, գործնական եւ յուսադրող նախաձեռնութեան մը դիմել կամ կրցա՛ւ յաջողիլ իր յայտարարած, այսպէս ըսած, միջնորդութեան մէջ, թէ՛ այդ բոլորը վերածուեցան ջրահոսութեան, կողմակալութեան եւ անշուշտ փոփոխութեան, եւ իրաւացիօրէ՛ն:

Մեր կարծիքով, այս օրինակաբանութիւններով, տեղեկագրութիւններով կամ խորհրդակցութիւններով կարելի չէ բանակցութիւններու մէջ միտնուիլ, ոչ ալ այդ ճամբաներով, բարուք ելքերով հանդէս գալ:

Թրամփը եւ իր աշակիցները, վստահաբար, առաւել կամ նուազ չափերով, կը գիտակցին կամ կը գուշակեն, թէ նման «տուր ու բարդ» տագնապ մը կարելի չէ մէկ օրէն միւսը լուծել եւ իրականացնել, մասնաւոր երբ իսրայելեան «խլուրդ»այնութիւնը միշտ ի վիճակի է ու պատրաստակամ վիճեցնելու որեւէ բարեացակամութիւն եւ յառաջդիմութիւն (անշուշտ, եթէ այդ ուղղութեամբ յստակ ու մեկին քայլեր ձեւաւորուին ու դրսեւորուին):

Արդեօք Թրամփ եւ ընկերը կը յիշե՛ն, թէ Մարտ 1979-ին Նոյնօրինակ համախմբում մը տեղի ունեցաւ, դարձեալ Ուաշինկթընի մէջ, ընդ հովանեան յատենի նախագահ Ճիմի Զարթըրի, մասնակցութեամբ Եգիպտոսի նախագահ Անուար Սատաթի եւ Իսրայելի վարչապետ Մենախիմ Դեկիւնի:

Արդի՞նք. Սատաթ իր երկրին մէջ ստացաւ իր... հատուցումը, զօրահանդէսի մը ընթացքին գնդակահարուելով, որովհետեւ Եգիպտոսիները երբեք յօժար ու համամիտ չէին, որ Եգիպտոս մուտք գործէր այդ «թունելի» մէջ:

Ծիշո՛ւ է, որ Եգիպտոսի մէջ տեղի չունեցան բախումներ եւ ընդհարումներ, որոնք երկիրը կրնային ապակայունացնել, բայց նորընտիր նախագահը Եգիպտոսի, Հիւսիսի Մուպարաբ, որ ամերիկամետ էր ու դիմակաւորութեամբ իսրայելամետ, առիթ չտուաւ, որ իր ժողովուրդը հակադարձ եւ ընդգծի «Եմի Տէյլիտ»ի դէմ, իսկ ատիկա «փրկեց» զինք փոթորիկներէ, թէեւ ժողովուրդը երբեք ալ չհամակերպուեցաւ այդ մտեցումներուն, առանց դիմելու զգալի ապահովական ճակատումներու:

Ինչո՞ւ կը վերոյիշենք այս կենդանի օրինակը, որպէսզի ցոյց տրուի, թէ Իսրայելի հետ որեւէ մերձեցում կամ շփում հաշտ աչքով պիտի չդիտուի, քանի ատիկա իր արաբականութեան եւ ազգայնականութեան հետ խոտոր կը համեմատի:

Կանգած չկայ, որ երեկուսն եւ այսօրուան պայմանները նոյնը չեն, հեռու են համեմատութիւն ըլլալէ, բայց, «վերջն ու ցաւը» խորն են եւ կարելի չէ անոնց կողքէն անցնիլ սառնասրտօրէն եւ անտարբերօրէն, հետեւաբար, այն ինչ որ տեղի կ'ունենայ այսօր, իր վաղուան հաւանական մագլցումներով, կրնայ գուժել անբաղձալիութիւններուն յաջորդական եւ անսահման տխուր հետեւանքներ:

### ՊԱՐՈՅՐ Յ. ԱՐՊԱՇԵԱՆ

\*\*\*

Այսօր, Նոյն «սենարիօ»ի Նոր տարբերակն է, որ կը ցուցադրուի, սակայն բոլորովին Նոր դերակատարներով, Նոր հնարքներով եւ Նոր ուղիներով, ուր աչք զարնողը, աւելի զազագած ու վարդենացած, խելագարուած եւ անասնացած մթնոլորտն է, Իսրայելի գլխաւորութեամբ, որուն հետ Թրամփին իսկ կը դժուարանայ համագործակցիլ, համաձայնիլ կամ համակերպիլ, որովհետեւ իր դէմ կը գտնէ վիշապ մը, սատանայ մը, որ իր խորամանկութիւններով ու լրբութիւններով կը փորձէ շրջանցել ամէն ինչ, Նոյնիսկ մարդկային տարրական ու բարոյական արժէքներ ոտնակոխելով:

Բանակցութիւններուն կայացումը եւ ընդհատումը, շեղումը եւ անկունաւորումը, այս յամբաքայլութեամբ ու մակընթացութեամբ, արդէն ցոյց կու տան, թէ Իսրայելի վարչապետ Պենիափին Նաթանիահուն ինչպիսի կարծրամտութեամբ եւ անզիջողութեամբ կը վերաբերի այս հաստափոր թղթածրարին հետ, ամէն գնով, յաւելեալ տարածքներ գրաւելով, Նորանոր ծուղակներու դիմելով, շահարկելով եւ թակարդային Նոր դարպասներ բանալով:

Անկասկած, Ուաշինկթընի պետական այրերը կը գիտակցին այս «խաբեբային» լարերու թունաւորութեան, բայց, գէթ առայժմ, կը խուսափին այլ ընտրութիւն կատարելէն, սպասելով յարմար ժամուն ու պահուն, Նկատի ունենալով որ անկիւ՛ր Պենիափինը, գիտէ, թէ իր էջը մութ ու խաւար է, երբ... զանգակները հնչեն:

Մինչ այդ, մեզ մտահոգողը եւ տագնապեցնողը այն է, որ Լիբանան ինչպէ՛ս դուրս պիտի գայ այս անելէն, ինչպէ՛ս պիտի դիմագրաւէ թաքուն ու բացայայտ մարտահրաւերները եւ ի՞նչ ճկունութեամբ պիտի գործէ, երբ իր դիմաց սկսած են ճօճուիլ նաեւ Ներքին «բաղաձայններ» ալ, որոնք, առանց լրջօրէն վերաբերուելու այսպիսի աղմուկներուն ու վանկարկումներուն հետ, աւելի կը բարդացնեն կարգավիճակը եւ աւելի կը խորացնեն ճեղքերը, առանց անդրադառնալու (կամ անդրադառնալու՞), թէ այդ ձեւով ինչպիսի փոսեր կը փորուին ամէնուրեք:

Եւ հոս է հանգոյցին մեծ կոյտը ու թաւալքը, որովհետեւ հո՛ն, Ուաշինկթընի մէջ կը բարբառեն, կ'որոճան ու կը ծամծմեն, ինչպէս Լիբանան-Իսրայել համախոհութիւն (՞) մը կարելի է գոյացնել երկու բեւեռներուն միջեւ:

Բայց, ատուք հեզասահ ընթացք մը ունենալու համար կայ դիւրին ու կարճ անցք մը, անհրաժեշտ է համալրուիլ այնպիսի հիւստածքներով, որոնք չեն կրնար խանգարուիլ ու խաթարուիլ օտարամտութիւններու կողմէ, կամ՝ մէկը միւսին հաշուոյն ունենայ շահոյթներ եւ առաւելութիւններ:

\*\*\*

Վերջին օրերուն (եւ ասիկա քանիտրոյ անգամ), երբ խաղաղութեան գործընթացը կը շարունակէ իր... խաղընթացութեամբ ինքզինք պարտադրել կամ ինքզինք արդարացնել, Նոյն պահուն, իսրայելեան հրոսակները, իրենց ռազմական եւ օդանաւային միջոցներով, «կը հնձեն» լիբանանցի քաղաքացիները (ոչ ընդդիմութիւն կամ «Յրգապլա»ականներ), Նոյնիսկ սպաննելով լիբանանեան բանակայիններ, որոնք ոչ մօտէն, ոչ ալ հեռուէն առնչակից են որեւէ առճակատային դիրքերու հետ, բայց «ճղճիմ» իսրայելացիները, իրենց «թիթենիկ»ներով այլ զբաղում չունին, բացի այսօրինակ ռճարարքներ կատարելով, հաւատալով որ անոնք Նոյնիսկ պարզ քաղաքացիներն ալ կը դիպուկահարեն, ինչպէս ընդդիմութիւնը:

Անցնող շաբաթ տեղի ունեցան անտեղի ու դատապարտելի ռճիրներ, ամբողջ ընտանիք մը ենթարկելով հրթիռարձակումի, նաեւ երեք լիբանանցի բանակայիններ նահատակելով:

Եւ ասոնք, երբ ուաշինկթընեան «համաձայնութեան» խելագատակութիւնը կը շարունակուի, իսկ հոս, Լիբանանի մէջ, իսրայելացի բռնապիղծեր ազատ-համարձակ... կ'որսան լիբանանցիներ, իրենց ընտանիքներով ու զինուորական ջոկատներով:

Հովանաւոր ու բանակցող կողմեր չէ՛ն տեսնել այս եւ նման բացայայտ վարագոյթիւնները, թէ՛ իրենց կատարածը դերասանական գայթակղութիւններ են, թե՛ ռազմ ունենալով իրենց «առաքելութեան» վրայ, հոգ չէ թէ դիմացի կողմը տուժուի կամ զոհուի:

Լա՛ւ, հարց տուող չկայ՞, թէ այդ ի՞նչ տեսակ բանակցութիւններ են, որոնք կ'ընթանան համաձայնութիւններու եւ խաղաղութիւններու պիտակներուն տակ:

17 Ապրիլէն ի վեր կ'արձանագրուի, շուրջ 3000 լիբանանցիներ թիրախաւորուած են եւ շուրջ տասը հազար ալ վիրաւորներ, չիաշուած քաղցումները եւ ականահարումները:

Պահ մը, միայն պահ մը, բանակցողներ թէ աշխարհի դետեր չէ՛ն տեսնել, չէ՛ն ապրիլ այս ռճարարքներուն անհարողութիւնը, յետոյ ալ կը գառնացնեն, որ իրենք կը միտին դրական համաձայնութիւններու եւ անմիջական հրադարձներու իրականացումին:

Կա՞յ ասկէ աւելի մեծ եւ աննախընթաց խայտառակութիւն, ամբողջ երկիր մը քանդել ու ժողովուրդ մը անեացնել, առանց որ տիրահռչակ մարդասպանները զսպուին ու խստագոյն հաշուեյարդարներու ենթարկուին:

Այլապէս ալ, դարձեալ թէ պահ մը հաւատք ընծայուի (՞), որ Ուաշինկթընէն «կանաչ լոյս» մը սփռուի, խաղաղութեան ընտրանքի հարցով, մտածող կա՞յ, թէ տուժած կողմին մարդկային կամ ինչքային «ՀԱՏՈՒՅՈՒՄ»ները ո՞վ եւ ինչպէ՛ս պիտի ապահովէ:

## ԱՆՆԵՏԱՅՄԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

### Շարունակութեամբ էջ 2-էն

մասնաւորի Միջին Արեւելք, Եւրոպա եւ Ամերիկաները: Այս սփիւռք(ները) կեդրոնացաւ եւ գոյատեւեց եռամիասնութեան շնորհիւ՝ եկեղեցի-դպրոց-ակումբ: Այս եռամիասնութիւնը ուներ եւ տակաւին ունի իր ենթաբաժանումները, որոնք կը տնօրինեն հայուն կեանքը:

1991-ի Հայաստանի վերանկախացումէն ետք ունեցանք Նոր կամ հայաստանեան սփիւռք(ները), որ ձեւաւորուեցաւ, երբ Հայաստանի քաղաքացիներ, հայրենիքէն արտագաղթելով, հիմնեցին դասական սփիւռքի կողքին Նոր սփիւռքի հասկացողութիւն մը: Դասական եւ հայաստանեան սփիւռքները, որոնք կ'ապրին միասին, կարելի չէրաւ համակցեցնել ստեղծել անոնց մէջէ՛ւ՝ մեկնելով կենցաղի, մտածողութեան եւ ապրելակերպի տարբերութիւններէ: Այս իրավիճակը Նոյնքան մտահոգութիւն է, որ պետք է դրուի մեր համահայկական օրակարգին վրայ՝ սփիւռք(ները) վերակազմակերպելու աշխատանքին մէջէն:

Այս երկու սփիւռք իրականութիւններուն վրայ կու գայ աւելնալու թուային սփիւռքը, որ երիտասարդ սերունդը իր հայկական ինքնութիւնը կը տեսնէ եւ կ'որոնէ՝ ընկերային հարթակներու եւ համացանցի տիրոյթի ընդմէջէն, յաճախ նաեւ չպատկանելով որեւէ ազգային ֆիզիքական կառոյցի:

Եթէ այս երեք շերտերու եւ իւրաքանչիւրին Ներքին բաժանումներուն մէջ տեղ գտած շատ մը հիմնահարցերու, կարիքներու եւ մտահոգութիւններու նայինք, դժուար պիտի չըլլայ ըսել, թէ մէկ ընդհանուր եւ հասարակ յայտարար մը կարելի պիտի չըլլայ ստեղծել եւ գետնեղել այս բոլորը իրենց ֆիզիքական, խորքային, ընկերային, մշակութային ու ապրելակերպի պիտակներով՝ մէկ ընդհանուր ծրագրային աշխատանքի պարունակի մը մէջ:

Մեր այսօրուան աշխատանքային հիմքը պիտի ըլլայ համադրում՝ համասփիւռքեան ցանց կամ գործակցութիւն ստեղծելու հեռանկարով: Այս պիտի ենթադրէ համադրում՝ մեր ազգային, եկեղեցական, կուսակցական եւ միութենական կեանքներուն, ուր իւրաքանչիւր գաղութ, հայապահպանումն անդին, պիտի սկսի արտադրել մշակոյթ՝ իր ամբողջական ազգային հասկացողութեան մէջէն, գիտութիւն ու միտք, եւ մասնագիտութիւն, որոնք հայկական են, ազգային եւ միեւնոյն ժամանակ մրցունակ՝ համաշխարհային մակարդակներու ստեղծած համակարգերու:

Այս ընելու համար սփիւռք(ները) ունի ուժերը՝ մարդկային, մասնագիտական, մտքի ու տնտեսական, որոնք կրնան յաջողցնել սփիւռք(ներու) այս համակարգերը ու արժեքափերը ստեղծելու տեսլականը: Ներկայ օրերու արիւստապարծ այս աշխարհի յառաջիկայացքին մէջ շատ աւելի դիւրին է համադրել գաղութներու մարտունակութիւնը իրարու հետ եւ իրարմով, որպէսզի գիրար գորացնեն:

Սփիւռքը իր համասփիւռքեան ՌԺԵՐԸ՝ տնտեսական, մարդուժի, մասնագիտութեան ու ժամանակի, պարտի վերադասարարել ու ներմուծել ինքն իր մէջ, որպէսզի ինքզինք վերակազմակերպէ՝ ներկայ օրերու հրամայականներէն մեկնելով:

Սփիւռք(ներու) գոյապայքարը այսօր կը մտնէ Նոր փուլ: Հայապահպանումը իր ամբողջական հասկացողութեան մէջէն պետք է դրսեւորել, որպէսզի արտադրէ Նոր հայապահպանում մը, որ կը տոկայ եւ կը դիմանայ ներկայ օրերու համաշխարհային մակարդակներու վրայ եւ մարտահրաւերներուն դիմաց:

Եթէ նախանձախնդիր ենք, որ հայկական սփիւռք(ները) շարունակէ ապրիլ եւ ոչ միայն վերապրիլ, այս կը նշանակէ, որ պարտինք մշակել Նոր ռազմավարութիւն, աշխատանքային թէ այլ բնոյթի ռազմավարութիւն, որպէսզի սփիւռքը չենթարկուի անհետացումի թանգարանի իրավիճակին:

Ուշ ենք, բայց՝ ոչ ուշացած: Պետք է մտածել, ծրագրել, համադրել եւ գործել սփիւռքահայութեան Նոր ռազմավարութեան ճամբով: Հայապահպանումը պետք է տանիլ դէպի կայուն զարգացումի գործընթաց, ուր պիտի շարունակենք արտադրել հայուն Նորը՝ Նոր մակարդակով եւ լիցքաւորումով:

Բաւական երկար դիտեցի Զուլալամփուրի Անհետացումի թանգարանին ցուցատախտակը եւ համոզուեցայ, որ հայուն սփիւռք(ները) պետք չէ ու պիտի չանհետանայ: Եթէ այս է մեր համոզմունքը, այս պիտի նշանակէ, որ հայու սփիւռքեան առաջնահերթ աշխատանքային ռազմավարութիւնը պիտի ըլլայ ինքզինք կազմակերպելը:

Ինքզինք կազմակերպելու համար մենք պիտի աշխատինք: Բոլորս ՄԻԱՄԻՆ:

Մեր կարծիքով՝ ո՛չ ոք:

Տոնալտները թո՛ղ խաբեն ու խաբուին իրենց... համախաբելութիւններով, Նաթանիահուններ՝ թո՛ղ լրբանան իրենց լրբութիւններով, իսկ ՄԻՆՈՒՃՄԸ՝ Լիբանանը այդ հրեշներուն դիմաց ի՞նչ կրնայ ընել կամ չընել, երբ զլիաւոր 2ՈՂը իր հայրենիքն ու իր ժողովուրդն են, որոնք ամէնօրեայ դրութեամբ կը իրկիզուին ու կը զլիաւորուին:

Հետաքրքրական է, լիբանանեան ընդդիմութեան դէմ պայքարը ու հալածանքը ո՞ր մնացին, երբ սատանայադէմ թշնամիներուն համար Լիբանանն ու լիբանանցիները են որ կ'անճիտուին, մնայուն թափով, լիբանանեան երկնակամարին վրայ թռչնէ տալով իրենց խլացուցիչ ու նեղացուցիչ «տրոն»ներուն, որոնք վայելելու «պատիւ» կ'ունենան նաեւ Պէյրութ այցելող ամերիկացի ու ֆրանսացի, այսպէս ըսած, բանագնացներ:

Այս տխուր ու տհաճ համայնապատկերը ամէնօրեայ յաճախականութեամբ կը իրամցուի աշխարհով մէկ, պղծելի ու պղծուած խաղաղութեան դրօշակներուն տակ, երբ Լիբանանն ու լիբանանցիները կը տառապին, կը հիւժուին ու կը հալին անոնց տարափներուն տակ:

Ուաշինկթընի մշուշապատ հաւաքը լիբանանցիները կը միացնէ՞... թէ՛ կը բաժնէ, կ'ուրախացնէ՞... թէ՛ կ'անջատէ իրարմէ:

Աչք ունեցողը թո՛ղ տեսնէ, ականջ ունեցողը թո՛ղ լսէ, արդարութիւն ակնկալողը թո՛ղ փնտռէ, իսկ խաղաղութիւն պահանջողը թո՛ղ... սպասէ:

# ՎԵՅԵՐՈՐԴ ԶԳԱՅԱՐԱՆԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԸՆԿԱՆՄԱՐԲ՝ ԲՆԱԶԱՆՅՈՒԹԵՆԵՆ ՄԻՆՉԵՒ ԳՈՅԱՏԵԻՄԱՆ ԲՆԱԶԳ

Ինչպէ՛ս կարելի է կողմնորոշուի, որ տուեալ անձը իսկապէս օժտուած է վեցերորդ զգայարանով:

Պարզ ընկալմամբ՝ եթէ նկատենք, ապա կը տեսնենք, որ այդ անձը անընդհատ կը գուշակէ որեւիցէ բան եւ այդ գուշակութիւններուն մեծ տոկոսը կը կատարուին: Ուստի, ամենամիամիտ բացատրութեամբ՝ ան գուշակելու հետ կապուած է կ'ըստի:

Ուրիշ կարգ մը զգացումներ եւս կը վերագրուին վեցերորդ զգայարանի, օրինակ՝ անձ մը կը զգայ, թէ աչք մը զինք կը հետապնդէ, եւ հետագային կը պարզուի անոր իսկութիւնը: Այսպիսի բազմաթիւ օրինակներ կարելի է թուարկել, որոնք վեցերորդ զգայարանի անուան տակ կը տեղադրուի:

Բայց պետք է յստակացնել, որ իւրաքանչիւր գուշակութիւն վեցերորդ զգայարան չէ: Պէտք է գանազանել զուգահեռութեան եւ գուշակութեան միջեւ:

Ընդհանրապէս վեցերորդ զգայարանը յառաջացած է սկզբնական մարդուն մօտ՝ ազատելու, ապրելու, գոյատեւելու համար մաքառելէ: Սակայն գիտնալու համար, թէ վեցերորդ զգայարանը ի՞նչ է, կամ իսկապէս գոյութիւն ունի՞ թէ ոչ, ապա պետք է իրեն յատուկ բացատրութիւնը տրուի, եւ ան ինչո՞վ կը տարբերի ուրիշ զգայարաններէ:

Ամէն մարդ ունի վեցերորդ զգայարան, բայց տոկոսները կը տարբերին: Ան կախարդութիւն չէ, այլ ուղեղի կարողութիւններն են մէկն է:

Նախնական մարդը, առեղծուածային երեւոյթներու նկատմամբ բացատրութիւն չունենալով, գայն կախարդութիւն սեպած է: Որովհետեւ ան ո՛չ աչքի վրայ հիմնուած է, ո՛չ ալ ականջի, այսինքն չէին գիտեր թէ ուրկէ՛ կու գար այդ զգայարանը:

Խորքին մէջ, ան ուղեղէն եկած զգացում մըն է, եւ անելին՝ տեղեկութիւններու կուտակման արդիւնք է, որքան անելի տեղեկութիւններ եւ գիտելիքներ ամբարանծ ըլլաս՝ այնքան անելի զօրաւոր կ'ըլլան կարողութիւններդ:

Իսկ ինչո՞ւ որոշ մարդիկ օժտուած են այս սուր կարողութեամբ եւ միւսները գուրկ են անկէ: Այս մէկը ընկալելու համար անհրաժեշտ է խորանալ մարդկութեան եղափոխութեան պատմութեան մէջ:

Իր գիտական ելութեամբ, վեցերորդ զգայարանը եթէ բնութագրենք, ապա կը տեսնենք, որ ան գոյատեւման բնագոյի համակարգի բնական զարգացումն ու եղափոխութիւնն է, որ պատմականօրէն յայտնի է որպէս գոյատեւման հմտութիւններ՝ սուր ուշադրութիւն եւ մշտական զգօնութիւն:

Եթէ փորձենք հետեւիլ այս եղափոխութեան ուղիին, ապա կը տեսնենք, որ ան ծնունդ առած է ծայրահեղ վտանգաւոր նախնադարեան միջավայրի հետեւանքէն, որ մարդու մօտ յառաջացած է ինքնապաշտպանման յաւերժական եւ յոյժ կարեւոր անհրաժեշտութենէ:

Ժամանակի ընթացքին, փորձի կուտակման զուգահեռ, այս զգօնութիւնը վերածուած է ենթագիտակցութեան մէջ կրկնուող իրարարձութիւններու օրինակափոխութիւնները պահպանելու համակարգի, որ յանգած է վտանգը կանխատեսելու եւ կանխելու կարողութեամբ, որ այսօր կ'անուանենք վեցերորդ զգայարան:

Հիմքը՝ գագաթային բլթակը, որ մարդու ուղեղին մէջ կը զբաղեցնէ ռազմավարական դիրք՝ ճակատային, ծոծրակային եւ քունքային բլթակներու մէջտեղը, հանդէս գալով որպէս տեղեկատուութեան կազմակերպիչ: Այստեղ ան կը ստանալ ազդակներ բոլոր զգայական ընկալիչներէ՝ զանոնք վերադասաւորելու եւ ձեւակերպելու համար:

Այսպիսով, գագաթային բլթակը կը կատարէ կենսական նշանակութիւն ունեցող գործառնող մը, որ գիտութեան մէջ կը կողուի բազմազգայական համարում: Ան այն վայրն է, ուր աչքերէն, ականջներէն եւ քիթէն ստացուած ազդանշանները միաձուլուելով եւ հաւաքուելով՝ մէկ եւ միասնական հասկնալի պատկեր կը յառաջացնեն եւ այնուհետեւ կը համագործակցին ուղեղի միւս կեդրոններուն հետ:

Ուղեղին մէջ տուեալներու մշակումը կ'ընթանայ երկու հիմնական եւ իրար ամբողջացնող ուղիներով:

Առաջին ուղին գիտակցուած մշակումն է: Այս համակարգը հիմնուած է տուեալներու քայլ առ քայլ վերլուծութեան վրայ, յենուելով տրամաբանութեան, թուային փաստերու եւ անկայտ պատճառներու վրայ: Արդիւնքը մարդուն կը ներկայանայ որպէս ամբողջովին հիմնաւորուած բանական որոշում: Օրինակ՝ այսօր հովը զօրաւոր է եւ մարդը մաշկին վրայ կը զգայ թէ խոնաւութիւնը բարձր է, այս կը նշանակէ, որ հովը ծովային է, ուրեք անձրեւը գալիք է, նոյնիսկ եթէ ամա չկայ: Այս երեւոյթը կարող է ան 10-20 անգամ ապրած եւ զգացած է, որուն արդիւնքը եղած է անձրեւ:

Ուստի, այս մէկը մարդուն ենթագիտակցութեան մէջ կը հիմնուի: Այսինքն ինք չի գիտեր, թէ ինք ինչու այսպէս կը զգայ, ուղղակի կը զգայ, որովհետեւ ուղեղին մէջ առատօրէն տեղեկութիւնները ամբարուած են, որոնք կը յուշեն թէ՛ այս զգացումները ասկէ առաջ ապրուած են, եւ եթէ այս 2-3 երեւոյթները միասին գան՝ յետոյ անձրեւ կը տեղայ:

Մարդը առանց մտածելու, առանց իսկ իմանալու պատճառը, որ հովը ծովային է, որու արդիւնքը անձրեւ է, կ'ըսէ. «Ես այս զգացումները կը զգամ եւ չեմ գիտեր ինչու կը զգամ: Օրինակ թացութիւնը կը զգամ մաշկիս վրայ, բայց չեմ գիտեր՝ խոնաւութիւնը բարձր է, անոր համար թացութիւն կը զգամ: Հովը կը զգամ, բայց ինչո՞ւ, որովհետեւ հովը զօրաւոր է՞: Այս ամենուն գիտական պատճառները ընդհանրապէս չեմ գիտեր, բայց գիտեմ, որ ասոնք երբ զգամ՝ անձրեւ պիտի գայ: Ինչո՞ւ գիտեմ՝ քանի որ նոյն զգացումները քանիցս ապրած եմ եւ գիտեմ անոնցմէ ետք անձրեւ կու գայ»:

Երկրորդ ուղին՝ ենթագիտակցական մշակումն է, որ ուղղակի վեցերորդ զգայարանի իրական կորիզն է: Այս համակարգը ուղեղը կը կատարէ յիշողութեան մէջ նախապէս տպաւորուած օրինակափոխութիւններու անկթարթային եւ կայծակնային ընթերցումով, եւ կապ կը հաստատուի ներկայ եւ անցեալ իրարարձութիւններու միջեւ, առանց տրամաբանական կամ գիտակցուած պատճառի եւ հետեւանքի կապերուն հետեւելու: Այս գործընթացը մարդուն կը յայտնուի յանկարծակի՝ ներքին ձայնի կամ անորոշ զգացողութեան տեսքով:

Այս կը վերաբերի կարգ մը մարդոց, որոնք մօտ այդ զգայարանները շատ անելի զօրաւոր են քան ուրիշներու: Որովհետեւ օրինակափոխութիւնները ամէն մարդու մօտ նոյն համակարգով չէ որ կը գործէ: Արդարեւ, կան մարդիկ, որոնք գերբնական կարողութիւններով օժտուած կ'ըլլան. անոնք

## ԽՈՐԵՆ ՓԻԼԱԴԵՆԱՆ (Չալիւպ)

աշխարհի միայն երկու տոկոսն են, օրինակափոխութիւնները իրենց ըով շատ բարձր կ'ըլլայ: Ամէն մարդ ունի, բայց կարգ մը մարդիկ ամենափոքր մանրամասները նոյնիսկ կը տեսնեն եւ այս ամէնը կը կուտակուի իրենց ուղեղին մէջ՝ առանց զգալու, օրինակ՝ անձրեւ պիտի գայ կ'ըսեն եւ անձրեւը կու գայ:

Այս տեսակի մարդիկ մէկ անգամ տեսնելով մարդուն շարժումը՝ կը բնութագրեն անոր նկարագիրը՝ ըսելով ինչպիսի անհատականութեան տէր անձնաւորութիւն մըն է:

Բայց ինչպէ՛ս կրնան գուշակել այս ամէնը: Ան այս ամէնը կը հետեւցնէ հիմնուելով տարիներու փորձին վրայ, որ կուտակուած է իր ենթագիտակցութեան մէջ՝ շփուելով այլազան նկարագրային խառնուածքի տէր եւ թիւով շատ մարդոց հետ: Այսպիսով ան սովոր կ'ըլլայ տեսակաւոր դէմքերու արտայայտութեան եւ մարմիններու շարժումներուն: Անոր ուղեղը մարմինի շարժումները եւ դիմագիծը իրար կապելով՝ կրնայ դատողութիւն կատարել, թէ այս դէմքը կրող անձը խիստ նկարագրի տէր անձնաւորութիւն կ'ըլլայ, որովհետեւ այս դիմագիծին եւ այս մարմնի շարժումներուն նման մարդոց եւ շատ հանդիպած եմ եւ իրենց նկարագրերը միեւնոյնն են:

Վեցերորդ զգայարանը այս պարագային եօթանասուն տոկոս դիպուկ կ'ըլլայ: Այս գիտութիւնը FBI-ը նոյնիսկ կ'օգտագործէ՝ երբ մէկը ձեռքբալայէ, նախ կը նային անոր դիմագիծին՝ տեղը կը սկսի հարցաքննութեան:

Ուրեմն, իրականութեան մէջ, ըլլայ մարդոց դիմագիծերու լեզուին, ըլլայ մարմնի լեզուին, ըլլայ ձայնի լեզուներուն, ըլլայ կիմանքի փոփոխութեան, ըլլայ որեւէ գործոնի միջոցաւ է որ կը պարզուի թէ ապագային ի՞նչ պիտի կատարուի, եւ այս է վեցերորդ զգայարանը:

Բայց պետք է եական միտք մը յստակացնել, որ ամէն մարդ ամէն բնագաւառի մէջ չէ որ վեցերորդ զգայարան կ'ունենայ: Այսինքն, կրնայ ըլլալ անձ մը դիւրութեամբ կիմանքի փոփոխութիւնը գիտնալ միայն շուրջը նայելով եւ ըսէ ինչ պիտի կատարուի, բայց չկարենայ մարդոց մարմնի շարժումները կարգաւ, որովհետեւ ընկերային յարաբերութիւններ մշակելու կարողութիւնները տկար են: Կամ հակառակը, կրնայ ըլլալ անձ մը դիմագիծին նկարագիրը անմիջապէս բացայայտէ, բայց նոյնիսկ զօրաւոր փոթորիկը, պաղը չենթադրէ որ անձրեւ պիտի գայ:

Այս ամէնը կը տարբերին իրարմէ, ըստ անձին տեղեկութիւններու տեսակին, մտածելակերպին, նոյնիսկ ըստ զգայարաններուն: Այսինքն՝ անձ մը, որ աչքի գոյները չի գանազաներ, օրինակ տղաքը ընդհանրապէս այդպէս են՝ գոյները մօտ կը տեսնեն, աղբիկներուն նման չեն: Կամ օրինակ մորթային զգացումը եթէ տկար է՝ դիւրին չի գար օդի փոփոխութիւնները, այդ մէկը անձին թոյլ չի տար, որ ապագային կարենայ եղանակի տեսութիւնը գուշակել, քանի որ զգայարանները տկար են այսպիսի նիւթերու մէջ: Այս պատճառով, ամէն վեցերորդ զգայարան ունեցող՝ ամէն բնագաւառի մէջ չէ որ կ'ունենայ:

Այս է միտքը եւ կրնանք ամենադիւրին օրինակը տալ՝ ոտնագնդակ խաղողները եւ ընդհանրապէս ոտնագնդակ դիտողները: Ով որ շատ կը դիտէ եւ որեւէ խաղ չի փախցնէր՝ ճշգրիտ արդիւնքներ կու տայ եւ այդպէս ալ կ'ըլլայ: Ինչո՞ւ, որովհետեւ այս անձը անելի քան 500 խաղ տեսած է:

Ասիկա ներկայիս AI-ին ողնաշարն է: AI-ը ոտնագնդակի 10000 խաղ կը սկսի դիտել եւ այս խաղին շարժումները կը հետեւցնէ, թէ ո՞ր խաղին օրէնքներուն համեմատ կ'ընթանայ, ապա կը սկսի գուշակել, եւ մենք այդ մէկը կը տեսնենք խաղին մէջ, երբ կ'ըսէ՝ 80 տոկոսով այս խումբը պիտի յաղթէ եւ 20 տոկոսով այս խումբը պիտի պարտուի: Այս է AI-ի սոր համակարգը, մարդիկ որ կը գուշակեն՝ ամէնը տեղեկութիւններու եւ գիտելիքներու խնդիր է, որ գագաթային բլթակին մէջ կը կուտակուի:

Իսկ ի՞նչ կը վերաբերի գիտական վեցերորդ զգայարանին, ապա ան ներքին հիւսուածքներու զգացումներն են, որ ուղեղը կը զգայ առանց անձին զգալուն, օրինակ շնչառութիւնը, սրտի զարկը, ստամոքսի շարժումները եւ այլ հիւսուածքներու աշխատանքները՝ շիղդը կը զրկեն ուղեղին, որովհետեւ նեարդային մարդակազմութիւնն ու ուղեղի գործառնող օրինակափոխութիւններու համակարգն է: Եղափոխութեան անցնելով ներկայիս կենսաբանական մարդակազմութեան, ապա ո՞ր կը գտնուի վեցերորդ զգայարանը մարդու ուղեղին մէջ: Գիտականօրէն՝ զգացողութիւնը, կանխատեսումն ու արագ որոշումներու կայացումը չեն կառավարուի միայն մէկ առանձին կեդրոնով: Անոնք հիմնուած են ուղեղի տարբեր բլթակներու եւ կառուցուածքներու լայնածաւալ նեարդային ցանցի վրայ, ուր օրինակափոխութիւններու ճանաչման համակարգերը կը խաղան առանցքային դեր:

Վեցերորդ զգայարանի գիտական կառուցը հետեւեալն է. 1) Մտապատկերներու փոխանցում - մտքերու ընթերցում, թէ՛ ազդանշաններ որսալ:

Մտքերը իմանալ եւ զգացումները փոխանցելն է:

2) Կանխատեսում եւ պայծառատեսութիւն - ապագային տեղի ունենալիք իրարարձութիւններու կամ անյայտ երեւոյթներու մասին նախապէս իմանալն է՝ հիմնուած ուժեղ ներքին զգացողութեան կամ յանկարծակի մտապատկերի վրայ:

3) Դիմագիտութեան զգուշակութիւնը լեզուի ընթերցում - անհատականութեան զգուշակութիւնը բացայայտումն է, որ մարդու արտաքին տեսքի, դէմքի գիծերու եւ մարմնի լեզուի միջոցաւ անոր բնաւորութիւնը, խառնուածքը եւ նկարագիրը առաջին հանդիպումէն եւ առաջին վայրկեանէն ճանչնալու կարողութիւնն է:

Ի վերջոյ, վեցերորդ զգայարանը կը ծնի իրական եւ հիւսուածքային զգայական ազդակներէ, որոնք աչքը, ականջը կամ մաշկը որսացած են բարձր ճշգրտութեամբ, որմէ ետք ուղեղի նեարդային ցանցը ենթագիտակցութեան մէջ ակնթարթօրէն կը մշակէ զանոնք՝ վերածելով յստակ ներքին զգացողութեան:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 31-ՐԿ ՏԱՐԵԿԱՐԶԻՆ ԱՌԻՔՈՎ

Կիրակի, 28 Յունիս 2026-ին, Անթիլիասի Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յընթացս Սուրբ Եւ Ամսի Պատարագին, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ պիտի կատարուի Սուրբ Աթոռոյ Սրբազնագոյն Հայրապետին՝

#### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ընտրութեան եւ օծման 31-րդ տարեդարձին առիթով

Սուրբ Պատարագէն անմիջապէս ետք, Վեհարանի դահլիճին մէջ, Վեհափառ Հայրապետը պիտի ուղղէ իր պատգամը եւ ընդունի շնորհաւորութիւնները:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն, որպէսզի իրենց արժեքներով մասնակից դառնան Սուրբ Պատարագին եւ հայցեն Ամենակալէն, որ նորանոր իրագործումներով ու յաջողութիւններով լեցուն երկար գահակալութիւն պարգեւէ մեր սիրելի Հայրապետին:

ԴԻՄՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

## Հ.Ս.Ս. ԱՔԱՏԵՄԻՆ՝ ALPHA LEAGUE-ի ԱԽՈՅԱՆ

ALPHA League-ի մինչեւ 17 տարեկաններու ֆութպոլի մրցաշարքի անարտակաւ հանդիպումը տեղի ունեցաւ «Champville» մարզադաշտին մէջ Հ.Ս.Ս. Աքատեմիի եւ EFP (Eleven Football Pro) խումբին միջեւ:

Բարձր մակարդակի մրցակցութեամբ եւ հետաքրքրական պայքարով յատկանշուած հանդիպման, Հ.Ս.Ս. Աքատեմին գերազանց խաղ ցուցաբերելով 4-1 արդիւնքով յաղթանակ արձանագրեց եւ արժանիօրէն հռչակուեցաւ մրցաշարքի պիտոյան:



Հանդիպումը անցաւ մեծ ոգեւորութեան մթնոլորտի մէջ եւ արժանացաւ մարզասէրներու բարձր գնահատանքին: Հ.Ս.Ս.-ի երիտասարդ մարզիկները իրենց կարգապահ խաղով, մարտական ոգիով եւ խմբային ներդաշնակութեամբ անգամ մը եւս հաստատեցին ակունքին մարզական բարձր մակարդակը:



Այս առիթով կը շնորհաւորենք մարզիկները, մարզիչներու կազմը եւ բոլոր պատասխանատուները, որոնք հետեւողական եւ նուիրեալ աշխատանքին շնորհիւ Հ.Ս.Ս.-ը կը շարունակէ արձանագրել նոր յաջողութիւններ ու մարզական նուաճումներ:

Այս պիտոյանական տիտղոսը եւս մէկ արժեքաւոր յաւելում է Հ.Ս.Ս.-ի մարզական հարուստ անադին մաղթելով նոր յաղթանակներ եւ անելի մեծ նուաճումներ ապագային:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԻԹ

**BIJOUTERIE GARO** հաստատութիւնը կարիքը ունի՝  
- Վարպետ ոսկերիչ ձեռային աշխատանքի «սատելք»  
- Փայլեցնող (ծիւծի)  
- Matrix

Պուրճ Համուտի հրապարակ, AUDI դրամատան շէնք, առաջին յարկ:  
Սեփականատիր՝ Կարո Գրիգորեան  
Հեռաձայն՝ 03 207 772 - 01 266514

## ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | www.araraddaily.com  
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية  
تصدر عن شركة ماسيس للمباعة والنشر (ش.م.م.)

